H. D. Siruni, Considérations sur le dialecte arménien des pays roumains, *Studia et Acta Orientalia* (Bucarest), vol. 7 (1968), p. 133—166.

O. Szemerenyi, Iranica IV, *Orbis* (Louvain), vol. 19 (1970), p. 500—519.

[*Մասնավորապես էջ 506—8, № 48, հայերեն աւրհնեմ, էջ 512, № 52, հայերեն աւազան—նոր պարսկերեն արզան*]։

N. Tahmizian, Monadische Denkmäler Alt-Armeniens; Die Tradition der armenischen Psalmodie, *Beiträge zur Musikwissenschaft* (Berlin), vol. 12 (1970), p. 29—59.

K. Trost, Die Perfectperiphrase im Altkirchenslavischen und Altarmenischen, *Indogermanische Forschungen* (Berlin), vol. 73 (1968), p. 87—109.

[*1968 թ. մատենագիտության մեջ («Պատմա-բանասիրական հանդես», 1970, № 1, էջ 259) այս հոդվածը սխալմամբ վերագրվել է Կլաուզին*]։

E. Tryjarski, Armeno-Kipchak Studies, *Orientalische Literaturzeitung* (Berlin), vol. 65 (1970), p. 533—541.

Պրոֆ. ՌՈԲԵՐՏ ԹՈՄՍՈՆ (ԱՄՆ)

ՊՐՈՖԵՍՈՐ ԳԱԳԻԿ ՀՈՎԱԿԻՄՅԱՆ

Ինչպես հաղորդում է Բորդոյում լույս ընծայվող «Սյուդ-Ուեստ» օրաթերթը իր 1972 թ. հուլիսի 7-ի համարում, Բորդոյի ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆ. Գագիկ Հովակիմյանը հետաքրքրական հաղորդում է տվել այն պատմական հուշարձանների մասին, որոնք դեռևս գոյություն ունեն Պարսկաստանում։ Ելույթի ժամանակ ցուցադրվել են բարձրորակ ժապավեններ։

Պրոֆ. Գագիկը հատկապես զեկուցել է Սուրբ Թադեվոսի (Թադեի) վանքի մասին։ Վերջինս գտնվում է Իրանական Ադրբեջանի հյուսիս-արևմուտքում, սահմանային Մակու քաղաքի մոտ, այն միջազգային ճանապարհի վրա, որը Եվրոպան կապում է Ասիային։

Պրոֆ. Գագիկը հաղորդել է, որ այս շատ հին կրոնական կենտրոնը կառուցվել է վաղ քրիստոնեության շրջանում։ Վանքը վերանորոգվել է VII, IX և XIII դարերում։ Այն գտնվում է բարձրադիր վայրում և կենդանություն է հաղորդում շրջապատի անապատին։

Ամեն տարի, որոշակի օր, տասնյակ հազարավոր ուխտավորներ գալիս են այնտեղ ունկընդրելու կատարվող հանդիսավոր կրոնական արարողությունը։ Վերջերս, Իրանի շահի համապատասխան կարգադրությամբ և հնագիտության նկատմամբ մեծ սեր տածող շահուհի Ֆարահ Դիբայի աջակցության շնորհիվ հայկական այս պատմական հուշարձանը պետք է ենթարկվի վերականգնման՝ Թեհրանի համալսարանի ներկայացուցիչների, ՅՈՒՆԵՍԿՕ-ի մասնագետների և պատմական հուշարձանների պահպանման վարչության աշխատակիցների կողմից։

Պրոֆ. Գագիկը (Գագիկ Հովակիմյան) ծնված 1912 թ. Թեհրանում, լայն ճանաչում գտած բիոքիմիկոս է։ Նա մի շարք արժեքավոր աշխատությունների հեղինակ է, հատկապես ստերինների բնագավառում։ Ընտրված է Բորդոյի գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, Ֆրանսիայի (Փարիզ) դեղագիտական ակադեմիայի, ֆրանսիական և անգլիական բիոքիմիկոսների միության անդամ, հանդիսանում է նաև բիոքիմիկոսների միջազգային ընկերության անդամ։ Մեծ է պրոֆ. Գագիկի վաստակը բիոքիմիայի զարգացման ասպարեզում Իրանում։ Նա Իրանի Բիոքիմիական Միության ինչպես և „Acta Biochimica Iranica" գիտական պարբերականի հիմնադիրն է։ Բացի դրանից, նա հեղինակ է մի շարք ձեռնարկների բիոքիմիայի և քիմիայի բնագավառում։ Խոշոր է նրա դերը տեղական մասնագետների ուսուցման ասպարեզում բիոքիմիայի ամբիոնում, որի հետ նա կապել է իր գիտական գործունեությունը։ Անհրաժեշտ է նշել նրա դերը նաև հայ մշակութային կյանքում. նրա ջանքերով Թեհրանում հրատարակվում է «Հուր» ամսագիրը, հայերեն և պարսկերեն լեզուներով։

Որպես մեջլիսի պատգամավոր, ընտրված երկրորդ անգամ Թեհրանի և Հյուսիսային շրջանների հայության կողմից, նա երկու հանձնաժողովների անդամ է՝ գիտության և բարձրագույն կրթության, ինչպես և առողջապահության գծով։ Պրոֆ. Գագիկը պարգևատրված է իրանական և ֆրանսիական մի շարք շքանշաններով, դրանց թվում ֆրանսիական կառավարության «Պալմ ակադեմիկ» գիտական շքանշանով։

ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Հ. ԲՈՒՆՅԱԹՅԱՆ